ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026 թվականի N 1283-Ա

17.09.2026 ԹՎԱԿԱՆԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԱՃՈՒՐԴՈՒՄ ՀՈՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ ԱԼԵՔՍԱՆ ԱՐԹՈՒՐԻ ԱԶԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐԸ ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 68-րդ հոդվածով, 4-րդ հոդվածով, հիմք ընդունելով Ալեքսան Արթուրի Ազարյանի դիմումը, Փամբակ համայնքի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության եվ բնապահպանության բաժինի պետ Արտակ Օհանյանի զեկուցագիրը այն մասին, որ աճուրդում հաղթող ճանաչված անձի հետ չի կնքվել պայմանագիր, քանի որ վճարումը կատարելուց հետո, հաջորդ երկու օրը եղել է ոչ աշխատանքային, իսկ համաձայն հողային օրենսգրքի՝ պայմանագիրը պետք է կնքվեր վճարում կատարելուց հետո երկօրյա ժամկետում, ***որոշում եմ***

Փամբակ համայնքում 17.09.2026թ-ին տեղի ունեցած աճուրդում հաղթող ճանաչված Ալեքսան Արթուրի Ազարյանի վճարած 3 200 000 դրամ գումարը, որը փոխանցվել է հողի օտարումից եկամուտներ հաշվեհամարին, 140000 դրամը, որը փոխանցվել է հողի օտարումից եկամուտներ հաշվեհամարին, որպես նախավճար և 30000 դրամ գումարը, որը փոխանցվել է որպես անշարժ գույքի գնահատման որոշման արժեք՝ հետ վերադարձնել վերջինիս (1570072680950400) հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

20 հոկտեմբերի 2026
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026 թվականի N 1284-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թ. մայիսի 26-ի թիվ 550 որոշմամբ սահմանված կարգի 3-րդ կետով, հաշվի առնելով Փամբակ համայնքի ավագանու 05 օգոստոսի 2026 թվականի N 133-Ա որոշումը, հիմք ընդունելով Գառնիկ Ֆիլայի Աղաջանյանի դիմումը՝ ***որոշում եմ***

1.Փամբակ համայնքի Եղեգնուտ բնակավայրում գտնվող՝ Գառնիկ Ֆիլայի Աղաջանյանին սեփականության իրավունքով պատկանող 06-036-0004-0001 կադաստրային ծածկագրով հողամասին կից գտնվող 06-036-0004-0004 կադաստրային ծածկագրով 0,13145հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապաըման գործառնական նշանակության հողամասը ընդլայման նպատակով՝ ուղղակի վաճառքով օտարել Գառնիկ Ֆիլայի Աղաջանյանին:

2.Պարտավորեցնել Գառնիկ Ֆիլայի Աղաջանյանին համայնքի ֆոնդային բյուջե վճարել 186528 (մեկ հարյուր ութսունվեց հազար հինգ հարյուր քսանութ) ՀՀ դրամ՝ հողի օտարումից եկամուտներ 900235422137 հաշվեհամարին:

3.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

20 հոկտեմբերի 2026
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026 թվականի N 1285-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի գ ենթակետով և 48-րդ կետով՝ ***որոշում եմ***

1.Փամբակ համայնքի տարածքում գտնվող 06-036-0010-0006 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, Եղեգնուտ, 4-րդ փողոց, 34/1 բնակելի տուն փոստային հասցե:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

20 հոկտեմբերի 2026
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026 թվականի N 1286-Ա

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 2-րդ, 8-րդ, 16-րդ կետերով, հաշվի առնելով Գառնիկ Աշխարհբեգի Նազլուխանյանի (ծնված՝ 09.08.1968թ) դիմումը, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի <<Դեբեդ համայնքի սեփականատերերի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների առաջին անգամ կազմված կադաստրային քարտեզագրման, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Գուգարքի տարածքային ստորաբաժանման և համայնքի տվյալների հիման վրա>> կազմված ցուցակից քաղվածքը, այն հանգամանքը, որ հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, և այն կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, կառուցված չէ քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք. ***որոշում եմ***

1. Հաստատել Փամբակ համայնքի Դեբեդ բնակավայրում գտնվող 06-034-0068-0002 ծածկագրով 0,166675հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, խոտհարք գործառնական նշանակության հողամասի չափերը:

2.Օրենքի ուժով ճանաչել Գառնիկ Աշխարհբեգի Նազլուխանյանի (ծնված՝ 09.08.1968թ) սեփականության իրավունքը 06-034-0068-0002 ծածկագրով 0,16հա և հատկացվածից ավել 0,006675 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, խոտհարք գործառնական նշանակության հողամասի նկատմամբ:

3.Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

20 հոկտեմբերի 2026
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026 թվականի N 1287-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ, 42-րդ և 43-րդ հոդվածներով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» 2019 թվականի նոյեմբերի 19-ի ՀՕ-225-Ն օրենքով, ՀՀ կառավարության 29 ապրիլի 2021թ N 698-Ն որոշմամբ սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումով հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 11-րդ կետերով և 13-րդ կետի ա) և բ) ենթակետերով, քանի որ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, հաշվի առնելով Ֆերդինանդ Հրաչիկի Ղևոնդյանի (ծնված՝ 20.01.1946թ.) դիմումը, «ԱՍՏՐՈԼԱԲ>> ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագծը, չափագրման համաձայնությունը և 2026TY5WPT մուտքագրման ծածկագրով տեղեկանքը՝ ***որոշում եմ***

1.Հաստատել Լոռու մարզ, Փամբակ համայնք, գյուղ Վահագնի, 5-րդ փողոց, 22 բնակելի տուն հասցեում գտնվող 06-103-0020-0013 ծածկագրով 0.28261 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի ճշտված չափերը, հողամասի վրա՝ առկա շինությունների ճշտված չափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2. Օրինականացնել Լոռու մարզ, Փամբակ համայնք, գյուղ Վահագնի, 5-րդ փողոց, 22 բնակելի տուն հասցեում գտնվող՝ Ֆերդինանդ Հրաչիկի Ղևոնդյանին (ծնված՝ 20.01.1946թ.) և Հասմիկ Սերյոժայի Հակոբյանին (ծնված՝ 01.09.1959թ.) սեփականություն իրավունքով պատկանող 06-103-0020-0013 ծածկագրով 0.28261 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում վերջիններիս կողմից ինքնակամ կառուցված, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների

էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտի իրավունք չառաջացնող, 2007-ից 2009թվականներին կառուցված ընդհանուր 259,80 ք/մ արտաքին չափերով բնակելի տունը, 2007թ-ին կառուցված 7,24 ք/մ արտաքին չափերով ավտոտնակը, 27,52 քմ արտաքին չափերով թռչնանոցը, 10,10 քմ արտաքն չափերով ծածկը, 19,80 քմ չափերով պարիսպը :

3.Պարտավորեցնել Ֆերդինանդ Հրաչիկի Ղևոնդյանին (ծնված՝ 20.01.1946թ.) և Հասմիկ Սերյոժայի Հակոբյանին (ծնված՝ 01.09.1959թ.) (հաշվեհամար՝ 900235422301 ինքնակամ կառույցի օրինականացում) վճարել 2007-ից 2009 թվականներին կառուցված ընդհանուր 259,80 ք/մ արտաքին չափերով բնակելի տան օրինականացման վճարը՝ 139253 ՀՀ դրամ, 2007թ-ին կառուցված 7,24 ք/մ արտաքին չափերով ավտոտնակի օրինականացման վճարը՝ 2329ՀՀ դրամ, 27,52 քմ արտաքին չափերով թռչնանոցի օրինականացման վճարը՝ 8850 ՀՀ դրամ, 10,10 քմ արտաքն չափերով ծածկի օրինականացման վճարը՝ 3249 ՀՀ դրամ 19,80 քմ արտաքն չափերով պարիսպի օրինականացման վճարը՝ 6368 ՀՀ դրամ : Ընդհամենը՝ 160049 ՀՀ դրամ:

4.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի կոմիտեում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

20 հոկտեմբերի 2026
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026 թվականի N 1288-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի գ ենթակետով և 48-րդ կետով՝ ***որոշում եմ***

1.Փամբակ համայնքի տարածքում գտնվող 06-103-0016-0005 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, Վահագնի, 7-րդ փողոց, 1-ին նրբանցք, 4 բնակելի տուն փոստային հասցե:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

21 հոկտեմբերի 2026
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026 թվականի N 1289-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի գ ենթակետով և 48-րդ կետով՝ ***որոշում եմ***

1. Փամբակ համայնքի տարածքում գտնվող 06-036-0159-0004 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ, Եղեգնուտ, 11 անասնաշենք փոստային հասցե:

2. Փամբակ համայնքի տարածքում գտնվող 06-036-0166-0002 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ, Եղեգնուտ, 9 անասնաշենք փոստային հասցե:

3. Փամբակ համայնքի տարածքում գտնվող 06-036-0159-0002 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ, Եղեգնուտ, 5պահեստ փոստային հասցե:

4.Սույն որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով տրամադրված հասցեները ենթակա են պետական գրանցման:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

21 հոկտեմբերի 2026
գ. Փամբակ